ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

8 մայիսի 2015 թվականի **թիվ 1** քաղ. Մոսկվա

«Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի իրագործման աշխատանքների արդյունքների մասին

1. Ընդունել ի գիտություն «Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի՝ 2014 թվականի իրագործման աշխատանքների արդյունքների մասին Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեղեկությունը:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ «Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» արձանագրության 20-րդ կետի 5-րդ ենթակետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 20 հավելված)՝ 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի ուսումնասիրությանը ներկայացնել Արձանագրության 20-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերում նշված, 2015 թվականին անցկացված աշխատանքների արդյունքների մասին՝ Եվրասիական տնտեսական միության անդամ

պետությունների լիազոր մարմինների հետ համաձայնեցված տեղեկությունը:

3. Սույն Կարգադրությունն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից	**Բելառուսի Հանրապետությունից**	**Ղազախստանի Հանրապետությունից**	**Ռուսաստանի Դաշնությունից**